# ԱԿՏ

## ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլխի համայնքում 2011 թվականի հուլիսի 25-ից 27-ն իրականացված վարչական հսկողության վերաբերյալ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց Ձորի մարզպետի 2011 թվականի հուլիսի 25-ի թիվ 29 կարգադրությամբ Քարագլխի համայնքում իրականացված վարչական հսկողության աշխատանքներին մասնակցել են մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա.Գրիգորյանը , ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ Ն.Սիմոնյանը , ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության առաջատար մասնագետ Ա.Հարությունյանը , Քարագլխի համայնքի ղեկավար Ա.Սարգսյանը , Քարագլխի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Դ.Պետրոսյանը , մարզպետարանի աշխատակազմի Հողօգտագործման և հողաշինության վերահսկողության բաժնի պետ Մ.Մեսրոպյանը : Քարագլխի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում պարզվել է , որ համայնքի ղեկավարը ՏԻՄ օրենքով սահմանված կարգով հրավիրում և վարում է ավագանու նիստերը :

Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի ու բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը :

Սահմանել է շենքերի ու շինությունների համարակալումը , ընդունել է որոշումներ , կազմել է արձանագրություններ , արձակել է կարգադրություններ : Իր անունից և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացումը : Ձեռնարկել է համապատասխան միջոցներ քաղաքացիական պաշտպանության , հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների , ինչպես նաև տեխնոլոգիական ու տարերային աղետների վնասների նվազեցման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ :

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով համայնքի ղեկավարը աշխատանքներ է տարել պարտադիր , պատվիրակված և կամավոր լիազորությունների կատարման ուղղությամբ:

Միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների շահերի պաշտպանության համար , կազմակերպում է համայնքի բնակչության հաշվառումը , սահմանում է խնամակալություն և հոգաբարձություն , կատարում է քաղաքացիների ընդունելություն :

Աջակցում է զորակոչին , զորահավաքներին , քաղաքացիական պաշտպանության մարմիններին : Սահմանված կարգով տալիս է շինարարության թույլտվություն , իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը , կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը , դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

Համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը : Կազմում և կառավարում է համայնքային ենթակայության հիմնարկների գործունեությունը , աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը , հանրակրթական դպրոցի գործունեությանը , առողջապահական մարմինների ,սանիտարահիգենիկ , հակահամաճարակային միջոցառումներին :

Համայնքի ավագանին հաստատել է համայնքի բյուջեն , բյուջեի փոփոխությունները : Որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը , սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը , համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը :

Քարագլխի համայնքի ավագանին 2010 թվականի ընթացքում գումարել է 5 նիստ, ընդունել է 9 որոշում իսկ 2011 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում 3 նիստ , ընդունել է 13 որոշում : 2010 թվականի ընթացքում համայնքի ավագանին 1 նիստ պակաս է գումարել , ինչը <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում է :

Քարագլխի համայնքի ավագանու 2010 թվականի մայիսի 13-ի թիվ 2 նիստում ընդունված թիվ 6 որոշմամբ 2010 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին առաջին եռամսյակի հաղորդման մեջ եկամտային և ծախսային մասերում նշված տվյալները չեն համապատասխանում գոյություն ունեցող փաստերին :

Քարագլխի համայնքի ավագանու 2010 թվականի մայիսի 13-ի թիվ 2 նիստում ընդունված թիվ 7 որոշման մեջ հղումը ՀՀ Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին սխալ է կատարվել , հղումը պետք է կատարել ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետին : <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի , 45-րդ հոդվածի 13-րդ կետի պահանջներին համապատասխան որոշումների վերնագրերը անհրաժեշտ է գրել մեծատառերով , իսկ ամսաթվերում ամիսը տառերով : Ղեկավարվելով <<Իրավական

ակտերի մասին >> ՀՀ օրենքի 70-րդ , <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 77.5-րդ հոդվածների պահանջներով , առաջարկվել է եռօրյա ժամկետում հրավիրել ավագանու արտահերթ նիստ և գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնել 2010 թվականի մայիսի 13-ի թիվ 2 նիստում ընդունված թիվ 6 և 7 որոշումները :

Համայնքի ավագանու կողմից 2011 թվականի հունվարի 27-ի նիստում ընդունված թիվ 4 որոշմամբ հաստատված հաստիքացուցակում տեղ են գտել որոշակի թերություններ : հաստիքացուցակով նախատեսված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները չեն համապատասխանեցվել ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 198 – Ա հրամանով հաստատված Քարագլխի համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված անվանումներին : Առաջարկվել է եռօրյա ժամկետում հրավիրել ավագանու արտահերթ նիստ , անվավեր ճանաչել և խմբագրված տարբերակով ընդունել Քարագլխի համայնքի ավագանու կողմից 27.01.2011 թվականին կայացված թիվ 4 որոշումը :

Քարագլխի համայնքի ղեկավարը 2010 թվականին ընդունել է 11 որոշումներ , 2011 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում ՝ 5 որոշումներ : Որոշումներն ընդունվել են օրենսդրության պահանջներին համապատասխան : 2010 թվականի ընթացքում համայնքի ղեկավարը արձակել է 6 , 2011 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում ՝11 կարգադրություններ :

2010 թվականի համայնքի ղեկավարի առանձին կարգադրություններ ընդունվել են առանց նշելու , թե որ նորմատիվ իրավական ակտի , դրա որ մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվել , ինչը << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտում է : Համայնքի ղեկավարի 2010 թվականի առանձին կարգադրություններում բացակայում են վերնագրերը , որը <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտում է :

Աշխատակազմում չեն վարվում համայնքային ծառայողների վերապատրաստման , անձնական գործերի հաշվառման , համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներին դիմած քաղաքացիների հաշվառման մատյաններ :

Համայնքի ղեկավարը խախտել է ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու հաստատմանը չի

ներկայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները :

Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը չի իրազեկում ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին :

Համայնքի ղեկավարը անհրաժեշտ միջոցներ չի կիրառում տեխնոլոգիական աղբյուրները կանխելու , փարերային և տեխնոլոգիական աղբյուրների հետևանքները վերացնելու ուղղությամբ :

Պատշաճ հսկողություն չի իրականացնում առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում :

Չի կազմակերպում համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները : Անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացվում բնության պահպանությանը :

Քարագլխի գյուղական համայնքում կատարված վարչական հսկողության վերաբերյալ կազմված ակտը քննարկվել է մարզպետարանում : Քննարկման արդյունքները տրամադրվել է համայնքի ղեկավարին և առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու բացթողումները վերացնելու համար . ձեռնարկված միջոցների վերաբերյալ ՀՀ Վայոց ձորի մարզպետին ներկայացնել տեղեկատվություն :

Հանձնաժողովի անդամներ Ն.Սիմոնյան
Ա.Գրիգորյան
Մ.Մեսրոպյան
Ա.Հարությունյան
Ա.Ստեփանյան
Պ.Պետրոսյան

29.07.2011թ.

ԱԿՏ

*ՀՀ Վայոց Ձորի մարզի Մալիշկայի համայնքում 2011 թվականի հունիսի 24-ից 30-ն իրականացված վարչական հսկողության վերաբերյալ*

*ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց Ձորի մարզպետի 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 21 կարգադրությամբ Մալիշկայի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում պարզվել է , որ համայնքի ղեկավարը ՏԻՄ օրենքով սահմանված կարգով հրավիրում և վարում է ավագանու նիստերը :*

*Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի ու բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը :*

*Սահմանել է շենքերի ու շինությունների համարակալումը , ընդունել է որոշումներ , կազմել է արձանագրություններ , արձակել է կարգադրություններ : Ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը : Ձեռնարկել է համապատասխան միջոցներ քաղաքացիական պաշտպանության , հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների , ինչպես նաև տեխնոլոգիական ու տարերային աղետների վտանգների նվազեցման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ :*

*Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով համայնքի ղեկավարը աշխատանքներ է տարել պարտադիր , պատվիրակված և կամավոր լիազորությունների կատարման ուղղությամբ:*

*Միջոցներ է ձեռնարկում համայնքի , բնակիչների շահերի պաշտպանության համար ., կազմակերպում է համայնքի բնակչության հաշվառումը սահմանում է խնամակալություն և հոգեբարձություն , կատարում է քաղաքացիների ընդունելություն :*

*Աջակցում է զորակոչին , զորահավաքներին , քաղաքացիական պաշտպանության մարմիններին : Սահմանված կարգով տալիս է շինարարության թույլտվություն , իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը , կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը , դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:*

*Համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը : Կազմում և կառավարում է համայնքային ենթակայության հիմնարկների գործունեությունը ., աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը , հանրակրթական դպրոցի գործունեությանը , սանիտարահիգենիկ , հակահամաճարակային միջոցառումներին :*

*Համայնքի ավագանին հաստատել է համայնքի զարգացման ծրագիրը , համայնքի բյուջեն , բյուջեի փոփոխությունները : Որոշել է համայնքի ղեկավարի*

*վարձապրության չափը , սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը :*

*Մալիշկայի համայնքի ավագանին 2010 թվականի ընթացքում գումարել է 9 նիստ, իսկ 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում 3 նիստ: Համայնքի ավագանու որոշումները ընդունվել են օրենսդրության պահանջներին համապատասխան և առաքվել են մարզպետարան սահմանված ժամկետում : Մալիշկայի համայնքի ղեկավարը 2010 թվականին ընդունել է 17 որոշումներ , 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում՝9 որոշումներ : 2010 թվականի ընթացքում համայնքի ղեկավարը արձակել է 19 , 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում ՝7 կարգադրություններ :*

*2010 թվականի համայնքի ղեկավարի առանձին որոշումներ ու կարգադրություններ ընդունվել են առանց նշելու , թե որ նորմատիվ իրավական ակտի , դրա որ մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվել , ինչը << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտում է : Համայնքի ղեկավարի 2010 թվականի թիվ 1; 8: 19 կարգադրություններում բացակայում են վերնագրերը , որը <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտում է :*

*<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենսդրության պահանջների կենսագործման ուղղությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել :*

*Աշխատակազմում վարվում են համայնքային ծառայողների վերապատրաստման , անձնական գործերի հաշվառման , համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներին դիմած քաղաքացիների հաշվառման մատյաններ :*

*Համայնքի ղեկավարը խախտել է ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները :*

*Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը չի իրազեկում ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին :*

*Համայնքի ղեկավարը անհրաժեշտ միջոցներ չի կիրառում տեխնոլոգիական աղետները կանխելու , տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ : Քիչ աշխատանքներ են տարվում բնակչության ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ :*

*Պատշաճ հսկողություն չի իրականացնում առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում : Միջոցառումներ չի ձեռնարկում սոցիալապես անապահով ընտանիքների պայմանների բարելավմանը : Չի կազմակերպում համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի*

*հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները : Անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացվում բնության պահպանությանը :*

*Համայնքում հողային հարաբերությունների բնագավառում էական խախտումներ չեն արձանագրվել :*

*Համայնքային սեփականություն հանդիսացող արոտների օգտագործման վերաբերյալ 2010 թվականին արոտավարձերը գանձվել են ցուցակային կարգով , իսկ 2011 թվականին , համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման պահանջների պետք է կնքվեն 400 հա արոտավայրերի վարձակալման պայմանագրեր , սակայն այդ աշխատանքները չեն կատարվել : Նշված պայմանագրերի կնքման համար տրվել է մեկամսյա ժամկետ :*

*Մալիշկայի գյուղական համայնքում կատարված վարչական հսկողության վերաբերյալ կազմված ակտը քննարկվել է մարզպետարանում : Քննարկման արդյունքները տրամադրվել է համայնքի ղեկավարին և առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու բացթողումները վերացնելու համար :*

*Հանձնաժողովի անդամներ՝* Ն.Սիմոնյան
Ա.Գրիգորյան
Մ.Մեսրոպյան
Վ.Կարապետյան

*30.06.2011թ.*

ԱԿՏ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Հորսի համայնքում 2011 թվականի ապրիլի 11-ից 14-ն իրականացված վարչական հսկողության վերաբերյալ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց Ձորի մարզպետի 2011 թվականի ապրիլի 8-ի թիվ 13 կարգադրությամբ Հորսի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում պարզվել է , որ համայնքի ղեկավարը ՏԻՄ օրենքով սահմանված կարգով հրավիրում և վարում է ավագանու նիստերը :

Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի ու բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը :

Սահմանել է շենքերի ու շինությունների համարակալումը , ընդունել է որոշումներ , կազմել է արձանագրություններ , արձակել է կարգադրություններ : Ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը : Ձեռնարկել է համապատասխան միջոցներ քաղաքացիական պաշտպանության , հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների , ինչպես նաև տեխնոլոգիական ու տարերային աղետների վտանգների նվազեցման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ :

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով համայնքի ղեկավարը աշխատանքներ է տարել պարտադիր , պատվիրակված և կամավոր լիազորությունների կատարման ուղղությամբ:

Միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների շահերի պաշտպանության համար , կազմակերպում է համայնքի բնակչության հաշվառումը սահմանում է խնամակալություն և հոգեբարձություն , կատարում է քաղաքացիների ընդունելություն :

Աջակցում է զորակոչին , զորահավաքներին , քաղաքացիական պաշտպանության մարմիններին : Սահմանված կարգով տալիս է շինարարության թույլտվություն , իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը , կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը , դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը :

Համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում

համայնքի սեփականություն համարվող հողամասերը : Կազմում և կառավարում է համայնքային ենթակայության հիմնարկների գործունեությունը , աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը , հանրակրթական դպրոցի գործունեությանը , սանիտարահիգենիկ , հակահամաճարակային միջոցառումներին :

Համայնքի ավագանին հաստատել է համայնքի զարգացման ծրագիրը , համայնքի բյուջեն , բյուջեի փոփոխությունները : Որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը , սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը :

Հորսի համայնքի ավագանին 2010 թվականի ընթացքում գումարել է 7 նիստ, իսկ 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում 6 նիստ: Համայնքի ավագանու որոշումները ընդունվել են օրենսդրության պահանջներին համապատասխան և տպվել են մարզպետարան սահմանված ժամկետում : Հորսի համայնքի ղեկավարը 2010 թվականին ընդունել է 8 որոշումներ , 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում `8 որոշումներ : 2010 թվականի ընթացքում համայնքի ղեկավարը արձակել է 12 , 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում `1 կարգադրություններ :

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենսդրության պահանջների կենսագործման ուղղությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ խախտումները և բացթողումները .

Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20 հրամանով հաստատված <<Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու մասին>> կարգի խախտմամբ:

Աշխատակազմում չեն վարվում համայնքային ծառայողների վերապատրաստման , անձնական գործերի հաշվառման , համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներին դիմած քաղաքացիների հաշվառման մատյաններ :

Համայնքի ղեկավարը խախտել է ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները :

*Համայնքի ղեկավարը անհատական ակտերը ընդունելուց հետո երկօրյա ժամկետում դրանք չի ուղարկում համայնքի ավագանու անդամներին, չի ապահովում դրանց հրապարակայնությունը :*

*Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը չի իրազեկում ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին :*

*Համայնքի ղեկավարը անհրաժեշտ միջոցներ չի կիրառում տեխնոլոգիական աղետները կանխելու , տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ : Քիչ աշխատանքներ են տարվում բնակչության ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ :*

*Պատշաճ հսկողություն չի իրականացնում առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում : Քիչ օժանդակություն է ցուցաբերվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը : Միջոցառումներ չի ձեռնարկում սոցիալապես անապահով ընտանիքների պայմանների բարելավմանը : Չի կազմակերպում համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները : Անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացվում բնության պահպանությանը :*

*Քիչ ուշադրություն է դարձվում մշակույթի տան , գրադարանի գործունեությանը , Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպմանը :*

*Համայնքում հողային հարաբերությունների բնագավառում էական խախտումներ չեն արձանագրվել : Համայնքի ղեկավարի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համայնքային սեփականություն հանդիսացող արոտների և խոտհարքների օգտագործման համար մինչև ընթացիկ տարվա ապրիլի 20-ը կնքել պայմանագրեր :*

*Հոռոմի գյուղական համայնքում կատարված վարչական հսկողության վերաբերյալ կազմված ակտը քննարկվել է մարզպետարանում : Քննարկման արդյունքները տրամադրվել է համայնքի ղեկավարին և առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու բացթողումները վերացնելու համար :*

*Հանձնաժողովի անդամներ՝* Ն.Սիմոնյան
Հ.Բաղդասարյան
Ս.Գրիգորյան
Ս.Խլղաթյան
Ռ.Հայրապետյան
Վ.Կարապետյան

*29.04.2011թ.*

ԱԿՏ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Սալլիի համայնքում 2011 թվականի ապրիլի 8-ից 11-ն իրականացված վարչական հսկողության վերաբերյալ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց Ձորի մարզպետի 2011 թվականի ապրիլի 8-ի թիվ 13 կարգադրությամբ Սալլիի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում պարզվել է , որ համայնքի ղեկավարը ՏԻՄ օրենքով սահմանված կարգով հրավիրում և վարում է ավագանու նիստերը :

Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի ու բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը :

Սահմանել է շենքերի ու շինությունների համարակալումը , ընդունել է որոշումներ , կազմել է արձանագրություններ , արձակել է կարգադրություններ : Ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը : Ձեռնարկել է համապատասխան միջոցներ քաղաքացիական պաշտպանության , հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների , ինչպես նաև տեխնոլոգիական ու տարերային աղետների վթարների նվազեցման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ :

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով համայնքի ղեկավարը աշխատանքներ է տարել պարտադիր , պատվիրակված և կամավոր լիազորությունների կատարման ուղղությամբ:

Միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների շահերի պաշտպանության համար , կազմակերպում է համայնքի բնակչության հաշվառումը սահմանում է խնամակալություն և հոգեբարձություն , կատարում է քաղաքացիների ընդունելություն :

Աջակցում է զորակոչին , զորահավաքներին , քաղաքացիական պաշտպանության մարմիններին : Սահմանված կարգով տալիս է շինարարության թույլտվություն , իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը , կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը , դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը :

Համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում

համայնքի սեփականություն համարվող հողամասերը ։ Կազմում և կառավարում է համայնքային ենթակայության հիմնարկների գործունեությունը , աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը , հանրակրթական դպրոցի գործունեությանը , սանիտարահիգենիկ , հակահամաճարակային միջոցառումներին ։

Համայնքի ավագանին հաստատել է համայնքի զարգացման ծրագիրը , համայնքի բյուջեն , բյուջեի փոփոխությունները ։ Որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը , սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ։

Սալլիի համայնքի ավագանին 2010 թվականի ընթացքում գումարել է 7 նիստ, իսկ 2011 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում 2 նիստ։ 2010 թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումները համարակալվել են ըստ ավագանու նիստերի արձանագրությունների համարների, մինչդեռ <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավական ակտի հերթական համարը սահմանում է իրավական ակտն ընդունող մարմինը՝ միայն արաբական թվանշաններով։ Համարների հերթականությունը սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից։

Սալլի համայքնի ղեկավարը ավագանուն չի ներկայացրել բյուջեի կատարման վերաբերյալ ինչպես տարեկան հաշվետվությունը, այնպես էլ եռամսյանկային հաղորդումները, մինչդեռ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածների համաձայն համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և մարզպետին, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարն ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը։

Համայնքի ավագանու որոշումներում բացակայում է համայնքի ղեկավարի կնիքը, մինչդեռ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը։

Սալլի համայնքի ավագանու որոշումների մի մասը, համայնքի ղեկավարի որոշումներն ու կարգադրություններն ընդունվել են առանց նշելու, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա որ մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվել, ինչը <<Իրավական ակտերի մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտում է:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենսդրության պահանջների կենսագործման ուղղությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ խախտումները և բացթողումները .

Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20 հրամանով հաստատված <<Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու մասին>> կարգի խախտմամբ:

Աշխատակազմում չեն վարվում համայնքային ծառայողների վերապատրաստման և անձնական գործերի հաշվառման մատյաններ :

Համայնքի ղեկավարը խախտել է ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները :

Համայնքի ղեկավարը անհատական ակտերը ընդունելուց հետո երկօրյա ժամկետում դրանք չի ուղարկում համայնքի ավագանու անդամներին, չի ապահովում դրանց հրապարակայնությունը :

Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը չի իրազեկում ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին :

Համայնքի ղեկավարը անհրաժեշտ միջոցներ չի կիրառում տեխնոլոգիական աղետները կանխելու , տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ : Քիչ աշխատանքներ են տարվում բնակչության ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ :

Պատշաճ հսկողություն չի իրականացնում առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում : Քիչ օժանդակություն է ցուցաբերվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը : Միջոցառումներ չի ձեռնարկում սոցիալապես անապահով ընտանիքների պայմանների բարելավմանը : Չի կազմակերպում համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները : Անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացվում բնության պահպանությանը :

Քիչ ուշադրություն է դարձվում մշակույթի տան , գրադարանի գործունեությանը , Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպմանը :

Համայնքում հողային հարաբերությունների բնագավառում էական խախտումներ չեն արձանագրվել : Համայնքի ղեկավարի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համայնքային սեփականություն հանդիսացող արոտների և խոտհարքների օգտագործման համար մինչև ընթացիկ տարվա ապրիլի 20-ը կնքել պայմանագրեր :

Սալլիի գյուղական համայնքում կատարված վարչական հսկողության վերաբերյալ կազմված ակտը քննարկվել է մարզպետարանում : Քննարկման արդյունքները տրամադրվել է համայնքի ղեկավարին և առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու բացթողումները վերացնելու համար :

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Սիմոնյան
Հ.Բաղդասարյան
Ա.Գրիգորյան
Ս.Խլխաթյան

21.04.2011թ